Արձանագրություն

Մայիսյան գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունից

Նախագահությամբ՝ Մ. Արզարյանի

Քարտուղարությամբ՝ Վ. Սարգսյանի

Հաշվետու ժողովին մասնակցում էին համայնքի թվով 45 բնակիչներ և մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ՝ պարոն՝ Ա. Այվազյանը:

Օրակարգում

Մայիսյան համայնքի ղեկավարի 2014 թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների մասին

Զեկ. համայնքի ղեկավար՝ Ե. Մովսիսյան

Հարգելի համագյուղացիներ, հարգելի պարոն Այվազյան, Մայիսյան համայնքում 2014 թվականի 1-ին կիսամյակում կատարվել են մի շարք աշխատանքներ՝ բյուջեի եկամուտների հաշվին:

Վաղ գարնանը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցություն» ծրագրի շրջանակներում ներկրված պարարտանյութ /1 պարկը 6000 դրամ/ և դիզելային վառելանյութ /1լ 350 դրամ/ տեղափոխվել է համայնք և տրվել բնակչությանը:

Համայնքում սանիտարահիգիենիկ մաքրությունը միշտ եղել է առաջնակարգ խնդիր, որի համար կատարվել են աղբաթափման և աղբահեռացման աշխատանքներ:

Մայիսյան համայնքից 2 կմ հեռավորության վրա է գտնվում Ծառաշեն թաղամասը, որտեղից 64 երեխաներ ձյան և անձրևի ժամանակ ոտքով հաճախում են Մայիսյանի միջնակարգ դպրոց, սակայն գյուղապետարանը հնարավորություն է ստեղծել երեխաներին օգտվելու երթուղային տրանսպորտից, ինչպես նաև դպրոցական երեխաների բուժզննման համար տրամադրել տրանսպորտային միջոց:

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում են գտնվում Հայրենական Մեծ պատերազմի վետերանների և Արցախյան պատերազմում անհայտ կորած

մայիսյանցիների ընտանիքները՝ ստանալով դրամական օգնություն: Համայնքում խմելու ջուրն ապահովում և սպասարկում է «Նոր Ակունք» ՓԲԸ-ն՝ մատակարարելով 17 ժամյա ջրամատակարարում, սակայն շուրջօրյա մատակարարելու համար ավագանու որոշմամբ համայնքի կողմից կատարվել է 1000.0 միլիոն դրամի ներդրում հին խողովակները նորերով փոխարինելու համար:

Համայնքում գյուղապետարանի միջոցների հաշվին վերանորոգվել է տնամերձ հողամասերի ոռոգման խողովակները, որից օգտվում են 60 ընտանիքներ: Համայնքում դեռ մնում է չլուծված տնամերձ հողամասերի ոռոգման խնդիրը: Այդ ուղղությամբ Արմավիրի մարզպետ պարոն Ա. Ղահրամանյանի միջամտությամբ հորատվելու է նոր խորքային հոր տվյալ տարածքները ոռոգելու նպատակով: 2014 թվականի ոռոգման ջրի սակավության պատճառով համայնքի կենտրոնական տարածքում գտնվող խորքային հորից անցկացվել է նոր խողովակաշար՝ 850 մ երկարությամբ տնամերձ և սեփականաշնորհված հողամասերը ոռոգելու նպատակով: Ինչպես նաև 350 մ երկարությամբ խողովակաշար է անցկացվել ոռոգման նպատակով:

2014 թվականի 2-րդ կիսամյակում Մայիսյան համայքում շուրջ 1 կմ երկարությամբ անցկացվել է լուսավորություն:

2014 թվականի մարտի 29-ից 31-ը ընկած ժամանակահատվածում ցրտահարության պատճառով համայնքում 100%- ով վնասվեցին 87.64 հա պտղատու այգիները: Անմիջապես համայնքի ղեկավարի կարգադրությամբ կազմվել է հանձնաժողով, ճշտվել վնասված այգիների տարածքները և այն ներկայացվել մարզպետարան:

Համայնքում առաջին կիսամյակում բյուջեի եկամուտները կազմում են՝

ա) Հողի հարկի գանձումներ՝ 60 %

բ) Գույքահարկի գանձումները՝ 55 %

Ավարտելով զեկույցը՝ Ե. Մովսիսյանը համայնքի բնակչությանը ցանկացավ բերքառատ տարի և անկորուստ բերքահավաք, որից և կախված է բնակչության բարեկեցիկ կյանքը:

Ելույթ ունեցան Հ. Հակոբյանը, Վ. Սարգսյանը, Հ. Միդոյանը, Հ. Մելքոնյանը, որոնք համայնքի ղեկավարի 2014 թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքները գնահատեցին բավարար: Ելույթ ունենալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ՝ Ա. Այվազյանը ցանկացավ հողի հարկի և գույքահարկի գանձումները ժամանակին հավաքագրելու և հետագա աշխատանքները կատարելու և 1-ին կիսամյակում կատարված աշխատանքները գնահատեց բավարար:

Համայնքի հիմնախնդիրները

1. 30 հա տնամերձ հողամասերի համար խորքային հորի վերանորոգում
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
3. Գյուղամիջյան ճանապարհների անմխիթար վիճակը
4. Մշակույթի տան վերանորոգումը

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աբգարյան

Քարտուղար՝ Վ. Սարգսյան